ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«26» փետրվար 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

Մ. Անանյան

ԳԲԽ-10/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «ԷԴԼԱԺ» ՍՊԸ-ի 08.02.2016թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքը և ի լրումն բողոքին 26.02.2016թ. ներկայացրած գրությունը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«ԷԴԼԱԺ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«ԷԴԼԱԺ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 08.02.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Աշտարակի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար Աշտարակի քաղաքապետարանի քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման և վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԱՄԱՇՏ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև Ընկերությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.02.2016թ. թիվ 2 որոշման 4-րդ կետի «Գ» ենթակետով Ընկերության կողմից ներկայացված հայտը մերժվել է:

Ընկերությունը բողոքով հայտնել է, որ «ԷԴԼԱԺ» ՍՊԸ-ի հայտը ենթակա չէր մերժման, քանի որ Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) ՄԱՍ II-ի 1.2 կետի համաձայն՝ նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

Ինչով պայմանավորված Մասնակիցը նպատակահարմար է համարել «Վճարողի բանկը» դաշտից հետո դաշտում լրացնել «Հ/Հ 160412023412», որն, ըստ էության, չի հակասում Հրավերի ՄԱՍ II–ի 1.2 կետին, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գտել է, որ սխալ դաշտում է լրացված, ինչը, ըստ հանձնաժողովի, հիմք է հանդիսացել Ընկերության հայտի մերժման համար և հանգեցրել է Ընկերության շահերի խախտմանը:

Միևնույն ժամանակ Ընկերությունը նշել է, որ Հրավերի «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգի» համաձայն՝ «Հ/Հ»-ի լրացման դաշտը նշելիս՝ որպես պարտադիր լրացվող դաշտ չի նշվում, որ այն պետք է լրացնել անմիջապես «Դեբետ» դաշտում, ինչպես նշել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը: Տվյալ պայմաններում և հիմք ընդունելով Հրավերի ՄԱՍ II-ի 1.2 կետը՝ Ընկերությունը «Հ/Հ»-ն ներկայացրել է՝ ըստ նպատակահարմարության:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.02.2016թ. թիվ 2 որոշման 4-րդ կետի «Գ» ենթակետով Ընկերության հայտը մերժելու մեկ այլ հիմք է հանդիսացել՝ մեջբերում. «...Վճարման պահանջագրում նշված է Շահառուի սխալ հաշվեհամար...», մինչդեռ Ընկերությունը վճարման պահանջագրում նշել է «900005000741» հաշվեհամարը, որն, ի դեպ, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 30.04.2015թ. թիվ 1/73-1/10671-15 գրության՝ ՀՀ պետական կառավարման մարմիններին ուղղված գրությամբ (պատճենը կցվում է)՝ հայտի ապահովման գումարը գանձելու նպատակով գանձապետական միասնական հաշվի եկամտային մասում բացված հաշվեհամարն է «900005000741»: Եվ քանի որ Պատվիրատուն Ընթացակարգը հայտարարելիս՝ Հրավերի համապատասխան մասում չի լրացրել «հշ. N» դաշտը, Ընկերությունը առաջնորդվել է ՀՀ ֆինանսների նախարարության թիվ 1/73-1/10671-15 գրությամբ,

ինչպես նաև նրանով, որ Պատվիրատուն իր գործարքները կատարում է ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության միջոցով, իսկ վերոհիշյալ հաշվեհամարը՝ «900005000741», հանդիսանում է հայտի ապահովման գումարը գանձելու նպատակով գանձապետական միասնական հաշվի եկամտային մասում բացված հաշվեհամար: Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Հրավերի տեքստը հաստատելու ժամանակ համակարգողին պետք է հանձնարարեր լրացնել «հշ. N» դաշտը, սակայն դրա փոխարեն հայտերի բացման նիստի ժամանակ մերժել է Ընկերության հայտը՝ ակնհայտ ոտնահարելով Ընկերության շահերը:

Նշված հիմքերով Ընկերության հայտը մերժելով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները՝ դրսևորելով կանխակալ վերաբերմունք:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է դադարեցնել Աշտարակի քաղաքապետարանի կարիքների համար Աշտարակի քաղաքապետարանի քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման և վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀԱՄԱՇՏ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.02.2016թ. կայացված թիվ 2 որոշման 4-րդ կետի «Գ» ենթակետը:

Ի լրումն 08.02.2016թ. բողոքի՝ Ընկերությունը 26.02.2016թ. գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին է ներկայացրել Ընկերությանը գնումների վերաբերյալ իրավախորհրդատվական ծառայություններ մատուցող կազմակերպության՝ «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան պատասխանատու ստորաբաժանմանը կատարված հարցումը և պատասխանը, որով, ըստ Ընկերության, ևս հավաստվում է, որ Պատվիրատուի Ընթացակարգի հրավերի «հշ. N» դաշտում «900005000741» հաշվեհամար լրացնելը չի հակասում ՀՀ գնումների դաշտը կարգավորող օրենսդրությանը, քանի որ նշված հաշվեհամարը հանդիսանում է ՀՀ գանձապետական միասնական հաշվի եկամտային մասում բացված հաշվեհամար և կիրառվում է թե՛ ՀՀ պետական կառավարման և թե՛ համայնքային մարմինների կողմից, իսկ Աշտարակի քաղաքապետարանը հենց

հանդիսանում է համայնքային մարմին, հետևաբար նաև, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված պարզաբանումը, Ընկերությունը եզրակացնում է, որ Պատվիրատուի կողմից կազմակերպված Ընթացակարգի շրջանակներում «հշ. N» դաշտում «900005000741» հաշվեհամարի լրացումը չի հակասում գնումների ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությանը և, հետևաբար, չի կարող հանդիսանալ գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտի մերժման հիմք:

2. Աշտարակի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Աշտարակի քաղաքապետարանը 16.02.2016թ. թիվ 244 գրությամբ ներկայացրել է «ՀՀԱՄԱՇՏ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Միևնույն ժամանակ Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ «ԷԴԼԱԺ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման վճարման պահանջագրում Ընթացակարգի հրավերով նախատեսված Պատվիրատուի հաշվեհամարի փոխարեն՝ նշված է եղել այլ հաշվեհամար:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետի պահանջները, գնահատման արդյունքում հայտում արձանագրվել է հրավերի պահանջներին հայտի ապահովման անհամապատասխանություն, որի հիմքով «ԷԴԼԱԺ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ չնայած այն հանգամանքին, որ Ընկերության հայտը մերժվել է վերոհիշյալ հիմքով, նրա կողմից ներկայացված գնային առաջարկը մրցակցային չէր:

Միևնույն ժամանակ Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգը իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից Աշտարակի քաղաքապետարանին տրված դրամաշնորհի շրջանակներում,

որտեղ հստակ ամրագրված են շինարարական աշխատանքների ավարտի ժամկետները:

Հիմք ընդունելով վերոգրյալ հանգամանքը՝ Պատվիրատուն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդից խնդրել է հնարավորինս սեղմ ժամկետներում կայացնել որոշում՝ դրամաշնորհի ժամանակացույցով նախատեսված աշխատանքները Պատվիրատուի կողմից ավարտին հասցնելու համար:

3. ԳԲԽ-10/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-10/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Աշտարակի քաղաքապետարանի կողմից Աշտարակի քաղաքապետարանի կարիքների համար Աշտարակի քաղաքապետարանի քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման և վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԱՄԱՇՏ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգ:

2. «ԷԴԼԱԺ» ՍՊԸ-ն Աշտարակի քաղաքապետարանի կարիքների համար Աշտարակի քաղաքապետարանի քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման և վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀԱՄԱՇՏ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու նպատակով 02.02.2016թ. հայտ է ներկայացրել:

3. «ԷԴԼԱԺ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի թիվ 9 հավելվածով հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագիրը լրացրել է հետևյալ ձև.

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N[1]

"_____" _____ 20___ թ.

Վճարող՝ <<ԷԴԼԱԺ ՍՊԸ>> ՀՎՀՀ - 02807287	**ԴԵԲԵՏ**	**ԳՈՒՄԱՐ** 168 774 ՀՀ դրամ
Վճարողի բանկը՝ ՎՏԲ բանկ Հայաստան բանկ ՓԲԸ	**ԿՐԵԴԻՏ**	**ԳՈՒՄԱՐ (ԲԱՌԵՐՈՎ)** Մեկ հարյուր Վաթսունութ Հազար յոթ հարյուր յոթանասունչորս ՀՀ դրամ
Հ/Հ 160412023048		
Շահառու՝ Աշտարակի քաղաքապետարան ՀՎՀՀ - 05005705		
Շահառուի բանկը՝ ՀՀ ֆինանսների նախարարության Գործառնական վարչություն	***հշ.N 900005000741***	

Գումարը բառերով՝ մեկ հարյուր վաթսունութ հազար յոթ հարյուր յոթանասունչորս ՀՀ դրամ

Գնման գործընթացի ծածկագիրը՝ <<ՀՀԱՄԱՇՏ-ՊԸԱՇՁԲ-16/1>>

Վճարման նպատակը՝ Հայտի ապահովում

Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

Կից____էջ

Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ Կ.Տ.	Վճարողի ստորագրությունները /_____/ /_____/ Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից /_____/ <<__>>_____20__թ. Կ.Տ.	Կատարված է վճարողի բանկի կողմից /_____/ <<__>>_____20__թ. Կ.Տ

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

4. «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ի 5-րդ կետի համաձայն՝ ***«վճարողի հաշվի համարը» դաշտում*** պարտադիր լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը:

5. «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ի 11-րդ կետի համաձայն՝ «շահառուի հաշվի համարը» դաշտում ***պարտադիր լրացվում է շահառուի այն բանկային հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները:***

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.02.2016թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի «Գ» ենթակետով մերժել է «ԷԴԼԱԺ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը՝ պատճառաբանելով, որ Ընկերության հայտը կազմված և ներկայացված է հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան, քանի որ վճարման պահանջագրում լրացված է Շահառուի սխալ հաշվեհամար և Վճարողի հաշվեհամարը «ԴԵԲԵՏ» դաշտում լրացնելու փոխարեն՝ լրացված է սխալ դաշտում:

7. Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության՝ ՀՀ պետական կառավարման աշխատակազմերի ղեկավարներին ուղղված 30.04.2015թ. թիվ 1/73-1/10671-15 գրության՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում մասնակիցներից հայտի և պայմանագրի ապահովման գումարը գանձելու նպատակով գանձապետական միասնական հաշվի եկամտային մասում բացվել են հետևյալ հաշվեհամարները՝ 900005000741 (հայտի ապահովում) և 900005000758 (պայմանագրի ապահովում):

Հիշյալ գործարքների շրջանակներում՝ պատվիրատուների կողմից կազմվող հրավերներում տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագրում «հշ. N» դաշտում անհրաժեշտ է լրացնել համապատասխան հաշվի համարը՝ հայտի ապահովման, բացառությամբ շրջանակային համաձայնագրերի միջոցով պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք չպարունակող գնումների դեպքում՝ 900005000741, պայմանագրի

ապահովման, ներառյալ շրջանակային համաձայնագրերի միջոցով պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք չպարունակող գնումների դեպքում՝ 900005000758:

8. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված 23.02.2016թ. թիվ 01/04.1/635 գրությամբ խնդրել է պարզաբանել, թե պետության համար պարտավորություններ առաջացնող, ինչպես նաև պետության համար պարտավորություններ չառաջացնող գնումների գործարքների դեպքում պատվիրատուի կողմից կազմվող հրավերում հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագրի օրինակելի ձևի ***պարտադիր լրացման ենթակա «հշ. N» դաշտում համապատասխան հաշվեհամար (հայտի ապահովման հաշվեհամար) լրացնելու պարտականությունը կրում է պատվիրատուն, թե մասնակիցը***:

9. Ի պատասխան «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 23.02.2016թ. թիվ 01/04.1/635 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 26.02.2016թ. թիվ 1/73-1/7279-16 գրությամբ հայտնել է, որ պատվիրատուների կողմից կազմվող հրավերներում տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագրում «հշ. N» դաշտում անհրաժեշտ է լրացնել համապատասխան հաշվի համարը (բացառությամբ շրջանակային համաձայնագրերի միջոցով պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք չպարունակող գնումների), ինչը նշված է նաև գրության մեջ: ***Այսինքն նշվածի համաձայն՝ վճարման պահանջի այդ դաշտը լրացվում է պատվիրատուի կողմից:***

10. «ԷԴԼԱԺ» ՍՊԸ-ին գնումների հետ կապված հարաբերությունների վերաբերյալ իրավախորհրդատվական ծառայություններ մատուցող «ԱՐՏ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.02.2016թ. թիվ 137 գրությամբ խնդրել է պարզաբանել, թե արդյոք ՀՀ գանձապետական միասնական հաշվի եկամտային մասում բացված **«900005000741» հաշվեհամարը կարելի է օգտագործել ՀՀ պետական կառավարման մարմինների և *համայնքային մարմինների կողմից* կազմակերպված գնումների գործընթացներում տուժանքի (հայտի ապահովում) գումարը վճարելու համար:**

11. Ի պատասխան «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի 22.02.2016թ. թիվ 137 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 24.02.2016թ. թիվ 07/78-2/6802-16 գրությամբ հայտնել է, որ ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 9-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում մասնակիցների հայտի ապահովման գումարների առանձնացված հաշվառումն ապահովելու նպատակով գանձապետական միասնական հաշվի եկամտային մասում տուգանքների և պատժամիջոցների համար բացված է հետևյալ հաշվեհամարը.

900005000741- «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում մասնակիցներից հայտի ապահովում» հաշվեհամարը:

12. Ի լրումն ՀՀ ֆինանսների նախարարության 24.02.2016թ. թիվ 07/78-2/6802-16 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 26.02.2016թ. թիվ 07/78-2/7153-16 գրությամբ հայտնել է, որ ***«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝*** հայտի ապահովման գումարների առանձնացված հաշվառումն ապահովելու նպատակով գանձապետական միասնական հաշվի եկամտային մասում տուգանքների և պատժամիջոցների համար բացված է հետևյալ հաշվեհամարը.

900005000741- «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում մասնակիցների հայտի ապահովում» հաշվեհամարը:

4. ԳԲԽ-10/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «ԷԴԼԱԺ» ՍՊԸ-ի 08.02.2016թ. ներկայացրած բողոքը, ի լրումն բողոքի 26.02.2016թ. ներկայացված գրությունը, ՀՀ ֆինանսների նախարարության 30.04.2015թ. թիվ 1/73-1/10671-15, 24.02.2016թ. թիվ 07/78-2/6802-16, 26.02.2016թ. թիվ 07/78-2/7153-16, 26.02.2016թ. թիվ 1/73-1/7279-16 գրությունները, հայտնում է հետևյալը:

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված հայտի ապահովումը:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից: Հայտի ապահովումը ներկայացվում է մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.02.2016թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի «Գ» ենթակետով մերժել է «ԷԴԼԱԺ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը՝ պատճառաբանելով, որ Ընկերության հայտը կազմված և ներկայացված է հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան, քանի որ Վճարողի հաշվեհամարը «ԴԵԲԵՏ» դաշտում լրացնելու փոխարեն՝ լրացված է սխալ դաշտում:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ Հրավերի ՄԱՍ II-ի 1.2 կետի համաձայն՝ նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

Հրավերի «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ի 5-րդ կետի համաձայն՝ պարտադիր լրացման ենթակա «վճարողի հաշվի համարը» դաշտում պարտադիր լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը:

Միևնույն ժամանակ «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ով ***չի պահանջվում, որ վճարողի հաշվեհամարը լրացվի վճարման <u>պահանջագրի հենց «ԴԵԲԵՏ» դաշտում</u>***, այլ պահանջում է, որ

պահանջագրում մասնակցի կողմից **պարտադիր լրացվի** վճարողի հաշվեհամարը, և հիմք ընդունելով Հրավերի ՄԱՍ II-ի 1.2 կետը՝ Ընկերությունը նպատակահարմար է համարել «Վճարողի բանկը» դաշտից հետո լրացնել «Հ/Հ 160412023412», որն, ըստ էության, չի հակասում Հրավերի ՄԱՍ II–ի 1.2 կետին, ուստի նման պայմաններում այս հիմքով Ընկերության հայտը մերժելը իրավաչափ չէ:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից վճարման պահանջագրում Շահառուի սխալ հաշվեհամար լրացնելուն, ապա այս կապակցությամբ հայտնում ենք, որ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության՝ ՀՀ պետական կառավարման մարմինների աշխատակազմերի ղեկավարներին ուղղված 30.04.2015թ. թիվ 1/73-1/10671-15 գրության՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում մասնակիցների հայտի և պայմանագրի ապահովման գումարը գանձելու նպատակով գանձապետական միասնական հաշվի եկամտային մասում բացվել են հետևյալ հաշվեհամարները՝ 900005000741 (հայտի ապահովում) և 900005000758 (պայմանագրի ապահովում):

Նշված շրջաբերականով ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ հիշյալ գործարքների շրջանակներում՝ պատվիրատուների կողմից կազմվող հրավերներում տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագրում «հշ. N» դաշտում անհրաժեշտ է լրացնել համապատասխան հաշվի համարը՝ հայտի ապահովման, բացառությամբ շրջանակային համաձայնագրերի միջոցով պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք չպարունակող գնումների դեպքում՝ 900005000741, պայմանագրի ապահովման, ներառյալ շրջանակային համաձայնագրերի միջոցով պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք չպարունակող գնումների դեպքում՝ 900005000758:

Կենտրոնը 23.02.2016թ. թիվ 01/04.1/635 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը խնդրել է պարզաբանել, ***թե պետության համար պարտավորություններ առաջացնող, ինչպես նաև <u>պետության համար պարտավորություններ չառաջացնող գնումների գործարքների դեպքում</u>*** պատվիրատուի կողմից կազմվող հրավերում հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագրի

օրինակելի ձևի պարտադիր լրացման ենթակա «հշ. N» դաշտում համապատասխան հաշվեհամար (հայտի ապահովման հաշվեհամար) լրացնելու պարտականությունը կրում է պատվիրատուն, թե մասնակիցը:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 26.02.2016թ. թիվ 1/73-1/7279-16 գրությամբ հայտնել է, որ տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագրում «հշ. N» դաշտում համապատասխան հաշվի համարը (բացառությամբ շրջանակային համաձայնագրերի միջոցով պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք չպարունակող գնումների) լրացնելու ***պարտականությունը կրում է պատվիրատուն:***

Միևնույն ժամանակ «ԷԴԼԱԺ» ՍՊԸ-ին գնումների հետ կապված հարաբերությունների վերաբերյալ իրավախորհրդատվական ծառայություններ մատուցող «ԱՐՏ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.02.2016թ. թիվ 137 գրությամբ խնդրել է պարզաբանել, թե արդյոք ՀՀ գանձապետական միասնական հաշվի եկմտային մասում բացված ***«900005000741» հաշվեհամարը կարելի է օգտագործել ՀՀ պետական կառավարման մարմինների և համայնքային մարմինների կողմից կազմակերպված գնումների գործընթացներում տուժանքի (հայտի ապահովում) գումարը վճարելու համար:***

Ի պատասխան վերոհիշյալ գրությանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 24.02.2016թ. թիվ 07/78-2/6802-16 և 26.02.2016թ. թիվ 07/78-2/7153-16 գրություններով հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ հայտի ապահովման գումարների առանձնացված հաշվառումն ապահովելու նպատակով գանձապետական միասնական հաշվի եկամտային մասում տուգանքների և պատժամիջոցների համար բացված է հետևյալ հաշվեհամարը.

900005000741- «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում մասնակիցների հայտի ապահովում» հաշվեհամարը:

Ընթացակարգի հրավերի «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ի 11-րդ կետի համաձայն՝ ***պարտադիր լրացման ենթակա*** «շահառուի հաշվի համարը» դաշտում լրացվում է շահառուի այն բանկային հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 26.02.2016թ. թիվ 1/73-1/7279-16 գրությամբ արտահայտված դիրքորոշման՝ «շահառուի հաշվի համարը» դաշտը լրացնելու պարտականությունը կրում է պատվիրատուն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգի հրավերի «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ի 11-րդ կետով նախատեսված «շահառուի հաշվի համարը» դաշտը հանդիսանում է պարտադիր լրացման ենթակա դաշտ, և քանի որ այդ դաշտը լրացնելու պարտականությունը կրում է հենց պատվիրատուն, սակայն Պատվիրատուի կողմից այն լրացված չի եղել, ուստի Ընկերությունը, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության՝ ՀՀ պետական կառավարման աշխատակազմերի ղեկավարներին ուղղված 30.04.2015թ. թիվ 1/73-1/10671-15 գրության մեջ նշված հաշվեհամարը, վճարման պահանջագրի նշված դաշտում լրացրել է «900005000741» հաշվեհամարը՝ որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից վճարվող հայտի ապահովման հաշվեհամար:

Նման պայմաններում գտնում եք, որ Ընկերությունը գտնվել է էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ, որը առաջացել է պատվիրատուի կողմից իր պարտականությունը չկատարելու, այն է՝ «շահառուի հաշվի համարը» դաշտը չլրացնելու հետևանքով, ուստի նման պայմաններում Պատվի-րատուն, մերժելով Ընկերության հայտը, գործել է ոչ իրավաչափ:

Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ գտնում ենք, որ «ԷԴԼԱԺ» ՍՊԸ-ի կողմից 08.02.2016թ. ներկայացված բողոքը հիմնավոր է, ուստի առաջարկում ենք «ԷԴԼԱԺ» ՍՊԸ-ի 08.02.2016թ. բողոքը բավարարել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-10/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան